ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

17 մարտի 2016 թվականի թիվ 13 քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների եւ ապրանքների ծագման տեղանունների մասին պայմանագրի նախագծի մասին

«Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության եւ պաշտպանության մասին» արձանագրության 15-րդ եւ 23-րդ կետերի իրագործման նպատակներով («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 26-րդ հավելված)՝

1. Հիմնականում հավանություն տալ «Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների եւ ապրանքների ծագման տեղանունների մասին» պայմանագրի նախագծին (կցվում է):

2. Խնդրել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներին իրականացնել սույն Կարգադրության 1-ին կետում նշված պայմանագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը եւ մինչեւ 2016 թվականի հուլիսի 1-ը արդյունքների մասին տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին.

3. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ.Պանկրատով**	**Ի.Շուվալով**

Նախագիծ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների եւ ապրանքների ծագման տեղանունների մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները՝ ի դեմս իրենց կառավարությունների, այսուհետ՝ անդամ պետություններ,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի, մասնավորապես՝ «Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության եւ պաշտպանության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 26-րդ հավելված) դրույթների վրա,

նպատակ ունենալով ապահովելու անդամ պետությունների տարածքներում Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) ապրանքային նշանների եւ սպասարկման նշանների, ինչպես նաեւ Միության ապրանքների ծագման տեղանունների իրավական պահպանությունը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ԳԼՈՒԽ I

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Սույն Պայմանագրի գործողության ոլորտը

1. Սույն Պայմանագրով կարգավորվում են Միության ապրանքային նշանների (սպասարկման նշանների) եւ Միության ապրանքների ծագման տեղանունների գրանցման, իրավական պահպանության եւ օգտագործման կապակցությամբ ծագող հարաբերությունները։

2. Սույն Պայմանագիրը չի կիրառվում հավաստագրային եւ երաշխիքային նշանների, ինչպես նաեւ այն նիշերի նկատմամբ, որոնք գրաֆիկորեն պատկերման հնարավորություն չունեն։

3. Միության ապրանքային նշանի (սպասարկման նշանի), Միության ապրանքի ծագման տեղանվան գրանցումը յուրաքանչյուր անդամ պետությունում ունի ապրանքային նշանի (սպասարկման նշանի), ապրանքի ծագման տեղանվան (այսուհետ՝ ԱԾՏ) ազգային գրանցման ուժ։

Հոդված 2

Սահմանումները

Սույն Պայմանագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

Միության ԱԾՏ-ների միասնական ռեեստր՝ Միության ԱԾՏ-ների վերաբերյալ տեղեկությունների ամբողջություն, որը կազմված է ազգային բաժիններից (ըստ անդամ պետությունների) եւ տեղադրվում է «Ինտերնետ» տեղեկատվական հաղորդակցության ցանցում՝ Միության պաշտոնական կայքում.

Միության ապրանքային նշանների միասնական ռեեստր՝ Միության ապրանքային նշանների (սպասարկման նշանների) վերաբերյալ տեղեկությունների ամբողջություն, որը կազմված է ազգային բաժիններից (ըստ անդամ պետությունների) եւ տեղադրվում է «Ինտերնետ» տեղեկատվական հաղորդակցության ցանցում՝ Միության պաշտոնական կայքում.

հայտատու՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը Միության ապրանքային նշանի կամ Միության ԱԾՏ հայտ է ներկայացրել ազգային արտոնագրային գերատեսչություն.

Միության ԱԾՏ հայտ՝ Միության ԱԾՏ գրանցման եւ օգտագործման իրավունքի տրամադրման հայտ կամ Միության գրանցված ԱԾՏ օգտագործման իրավունքի տրամադրման հայտ, Միության ԱԾՏ գրանցելու եւ Միության ԱԾՏ օգտագործելու իրավունք տրամադրելու կամ Միության գրանցված ԱԾՏ օգտագործելու իրավունք տրամադրելու համար անհրաժեշտ տեղեկությունների ամբողջությունը պարունակող փաստաթուղթ.

Միության ապրանքային նշանի հայտ՝ Միության ապրանքային նշանի (սպասարկման նշանի) գրանցման հայտ՝ Միության ապրանքային նշանը (սպասարկման նշանը) գրանցելու համար անհրաժեշտ տեղեկությունների ամբողջությունը պարունակող փաստաթուղթ.

Հրահանգ՝ ակտ, որով սահմանվում են Միության ապրանքային նշանի (սպասարկման նշանի) կամ Միության ԱԾՏ գրանցման հայտերը ներկայացնելու, դրանց ուսումնասիրության, Միության ապրանքային նշանների (սպասարկման նշանների) եւ Միության ԱԾՏ գրանցման ու դրանց իրավական պահպանության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող կանոնները.

Միության կոլեկտիվ նշան՝ միավորման կազմում ընդգրկված անձանց կողմից արտադրվող եւ (կամ) իրացվող ապրանքները նշելու համար նախատեսված այնպիսի ընկերակցության, միության կամ այլ միավորման ապրանքային նշան, որոնց ստեղծումը եւ գործունեությունը չի հակասում այն անդամ պետության օրենսդրության պահանջներին, որի տարածքում դրանք ստեղծվել են.

ազգային արտոնագրային գերատեսչություն՝ անդամ պետության լիազորված մարմին (կազմակերպություն), որը պատասխանատու է, իր պետության օրենսդրությանը համապատասխան, սույն Պայմանագիրն իրագործելու համար։ Սույն Պայմանագրում այն ազգային արտոնագրային գերատեսչությունը, որտեղ ներկայացվել է Միության ապրանքային նշանի հայտը կամ Միության ԱԾՏ հայտը, կոչվում է «ներկայացման գերատեսչություն».

Միության ԱԾՏ՝ միաժամանակ բոլոր անդամ պետությունների տարածքներում պահպանվող նիշ, որը երկրի, քաղաքային կամ գյուղական բնակավայրի, տեղանքի կամ այլ աշխարհագրական օբյեկտի ժամանակակից կամ պատմական, պաշտոնական կամ ոչ պաշտոնական, լրիվ կամ կրճատ անվանումն է կամ պարունակում է այդ անվանումը, ինչպես նաեւ դրանից ածանցված եւ այն ապրանքի առնչությամբ օգտագործման արդյունքում հայտնի դարձած նիշ, որի առանձնահատուկ հատկանիշները բացառապես կամ գլխավորապես որոշվում են տվյալ աշխարհագրական օբյեկտին բնորոշ բնապայմաններով եւ (կամ) մարդկային գործոններով.

պաշտոնական կայք՝ Միության պաշտոնական կայք «Ինտերնետ» տեղեկատվական հեռահաղորդակցության ցանցում.

տուրք՝ սույն Պայմանագրով նախատեսված՝ իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների իրականացման համար վճար, որը փոխանցվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

իրավատեր՝ Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունք կամ Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունք ունեցող անձ.

Միության ապրանքային նշանի վկայագիր՝ փաստաթուղթ, որը հավաստում է Միության ապրանքային նշանի առաջնությունը եւ անդամ պետությունների տարածքներում դրանում նշված ապրանքների մասով Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը.

Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի վկայագիր՝ փաստաթուղթ, որը

հավաստում է անդամ պետությունների տարածքներում ԱԾՏ-ի օգտագործման իրավունքը.

Միության ապրանքային նշան՝ Միության ապրանքային նշան (սպասարկման նշան)՝ բոլոր անդամ պետությունների տարածքներում միաժամանակ պահպանվող՝ ապրանքների, աշխատանքների եւ (կամ) ծառայությունների (այսուհետ՝ ապրանքներ) անհատականացման համար ծառայող նիշ:

ԳԼՈՒԽ II

Միության ապրանքային նշաններ

Հոդված 3

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը

1. Իրավատերը բացառիկ իրավունք ունի անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան օգտագործելու Միության ապրանքային նշանը եւ տնօրինելու այդ բացառիկ իրավունքը, ինչպես նաեւ իրավունք ունի այլ անձանց արգելելու համանման ապրանքների համար օգտագործել Միության ապրանքային նշանը կամ դրան շփոթելու աստիճան նման նիշը:

Ոչ ոք առանց իրավատիրոջ թույլտվության համանման ապրանքների համար իրավունք չունի օգտագործելու անդամ պետությունների տարածքներում պահպանվող Միության ապրանքային նշանը կամ դրան շփոթելու աստիճան նման նիշերը:

2. Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը գործում է Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրում այն գրանցելու օրվանից մինչեւ 10 տարին լրանալը, որը հաշվարկվում է Միության ապրանքային նշանի հայտը ներկայացնելու օրվանից: Բացառիկ իրավունքի գործողության

ժամկետը, այդ իրավունքի գործողության վերջին տարվա ընթացքում ներկայացված իրավատիրոջ դիմումի համաձայն, կարող է 10 տարով երկարաձգվել ներկայացման գերատեսչության կողմից՝ Հրահանգի պահանջները պահպանելու պայմանով։

3. Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը կարող է անսահմանափակ երկարաձգվել։

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը երկարաձգելու համար վճարվում են տուրքեր՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված չափով։

Իրավատիրոջ միջնորդությամբ Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը լրանալուն պես սույն հոդվածի 2-րդ կետում նշված դիմումը ներկայացնելու համար նրան տրվում է 6 ամիս՝ ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված չափով լրացուցիչ տուրք վճարելու պայմանով։

4. Անդամ պետության տարածքում Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի խախտմանը վերաբերող վեճերը կարգավորվում են այդ պետության օրենսդրությանը համապատասխան։

5. Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի խախտման համար անդամ պետության օրենսդրությամբ նախատեսվում է նույնպիսի պատասխանատվություն, ինչպիսին նախատեսված է այդ պետությունում գրանցված ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի խախտման համար։

Հոդված 4

Միության ապրանքային նշանի հայտը

1. Միության ապրանքային նշանի հայտը հայտատուի կողմից

ներկայացման գերատեսչություն է ներկայացվում Հրահանգով սահմանվող ձեւով եւ կարգով։

2. Միության ապրանքային նշանի հայտը պետք է պարունակի՝

1) հայտատուի անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում)) եւ գտնվելու վայրի (բնակության վայրի) հասցեն, ինչպես նաեւ ներկայացման գերատեսչության պետության տարածքում նամակագրության համար նախատեսված հասցեն.

2) հայտարկվող նիշը.

3) այն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ խնդրարկվում է Միության ապրանքային նշանի գրանցումը, եւ որոնք խմբավորված են «Նշանների գրանցման նպատակներով ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգման վերաբերյալ» 1957 թվականի հունիսի 15-ի Նիցցայի համաձայնագրով նախատեսված՝ Նշանների գրանցման նպատակներով ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգման (այսուհետ՝ ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգում) դասերին համապատասխան։

3. Միության ապրանքային նշանի հայտը կարող է պարունակել՝

1) հայտ ներկայացնելու օրվանից ավելի վաղ առաջնության սահմանման նշում, որը կարող է ներկայացվել Միության ապրանքային նշանի հայտը ներկայացնելու օրվանից 1 ամսվա ընթացքում.

2) նշում այն մասին, որ Միության ապրանքային նշանը հայտարկվում է գույնով կամ գունային համակցությամբ.

3) նշում այն մասին, որ Միության ապրանքային նշանը պետք է գրանցվի կամ հրապարակվի Հրահանգին համապատասխան՝ ներկայացման գերատեսչության կողմից կիրառվող ստանդարտ պայմանանշանների օգտագործմամբ.

4) հայտարկվող բառային նիշի գրադարձումը՝ կիրիլյան այբուբենի

օգտագործմամբ.

5) հայտարկվող բառային նիշի թարգմանությունը՝ անդամ պետությունների պետական լեզուներով.

6) հայտարկվող նիշի նկարագրությունը.

7) տեղեկություններ՝ հայտատուի ներկայացուցչի մասին, եւ նրա հասցեն։

4. Միության ապրանքային նշանի հայտի ներկայացման ժամանակ կամ ոչ ուշ, քան այդպիսի հայտը ստանալու օրվանից 1 ամիս հետո հայտատուն ներկայացնում է Միության ապրանքային նշանի հայտ ներկայացնելու համար տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթ։

Միության ապրանքային նշանի հայտը ներկայացնելու համար տուրքը վճարվում է ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված չափով։

5. Ազգային արտոնագրային գերատեսչություն ներկայացված՝ ապրանքային նշանի գրանցման հայտը կարող է փոխակերպվել Միության ապրանքային նշանի հայտի՝ սույն Պայմանագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան կոնվենցիոն առաջնություն սահմանելու համար պահանջները պահպանելու պայմանով։

Ապրանքային նշանի գրանցման հայտի՝ Միության ապրանքային նշանի հայտի փոխակերպման կարգը սահմանվում է Հրահանգով։

6. Միության ապրանքային նշանի հայտը կազմվում է ռուսերենով։

Միության ապրանքային նշանի հայտը կարող է կազմվել ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ նախատեսված լեզվով՝ կից ներկայացնելով այդ հայտի ռուսերեն տարբերակը՝ Հրահանգի պահանջներին համապատասխան։

Նման դեպքում Միության ապրանքային նշանի հայտի բովանդակության մեկնաբանության հարցով տարաձայնություններ առաջանալիս գերակա ուժ ունի

այդ հայտի ռուսերեն տարբերակի տեքստը:

Ազգային արտոնագրային գերատեսչությունների միջեւ նամակագրությունն իրականացվում է ռուսերենով:

7. Միության ապրանքային նշանի հայտի առնչությամբ գործերի վարումը կարող է հայտատուի կողմից իրականացվել ինքնուրույն կամ ներկայացուցչի միջոցով, այդ թվում՝ ներկայացման գերատեսչությունում միջազգային պայմանագրերի եւ ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությանը համապատասխան գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով:

Հոդված 5

Միության ապրանքային նշանի առաջնությունը

1. Սույն Պայմանագրի նպատակների համար Միության ապրանքային նշանի առաջնությունը սահմանվում է Միության ապրանքային նշանի հայտ ներկայացնելու ամսաթվով:

2. Միության ապրանքային նշանի առաջնությունը կարող է սահմանվել ապրանքային նշանի առաջին հայտը «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 1883 թվականի մարտի 20-ի փարիզյան կոնվենցիայի (այսուհետ՝ Փարիզյան կոնվենցիա) մասնակից պետություն ներկայացնելու ամսաթվով (կոնվենցիոն առաջնություն), եթե Միության ապրանքային նշանի հայտը ներկայացման գերատեսչություն է ներկայացվել նշված օրվանից 6 ամսվա ընթացքում:

3. Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետություններից մեկի տարածքում կազմակերպված պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսների ցուցանմուշների վրա զետեղված Միության ապրանքային նշանի առաջնությունը կարող է սահմանվել ցուցահանդեսում ցուցանմուշի բաց

ցուցադրությունն սկսելու ամսաթվով (ցուցահանդեսային առաջնություն), եթե Միության ապրանքային նշանի հայտը ներկայացման գերատեսչություն է ներկայացվել նշված օրվանից 6 ամսվա ընթացքում:

4. Հայտարկված ապրանքների համար Միության ապրանքային նշանի բազմակի առաջնությունը սահմանվում է հայտատուի միջնորդությամբ՝ այդ հայտատուի ապրանքային նշանների մի քանի հայտերի առկայության դեպքում, որոնք Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետություններում ներկայացվել են Միության ապրանքային նշանի համար ներկայացված հայտում նշված տարբեր ապրանքների մասով մեկ նիշի համար:

5. Այն դեպքում, երբ Միության ապրանքային նշանի հայտը պարունակում է դրա ներկայացման օրվանից ավելի վաղ առաջնություն սահմանելու մասին նշում, Միության ապրանքային նշանի հայտը ներկայացնելիս կամ հայտը ներկայացնելու օրվանից հետո 3 ամսից ոչ ուշ հայտատուն պետք է ներկայացնի այդ պահանջի իրավաչափությունը հաստատող փաստաթղթեր:

6. Միության ապրանքային նշանի առանձնացված հայտերը պահպանում են սկզբնական հայտի ներկայացման ամսաթիվը եւ դրա առաջնությունը (այդպիսի առաջնության առկայության դեպքում):

7. Միության ապրանքային նշանի առաջնությունը կարող է սահմանվել «Նշանների միջազգային գրանցման մասին» 1891 թվականի ապրիլի 14-ի մադրիդյան համաձայնագրին եւ «Նշանների միջազգային գրանցման մասին» մադրիդյան համաձայնագրին կից 1989 թվականի հունիսի 28-ի արձանագրությանը համապատասխան, ըստ միջազգային գրանցման ամսաթվի, տարածքային ընդլայնման մասին գրառում կատարելու ամսաթվի:

Հոդված 6

Միության ապրանքային նշանի հայտի նախնական փորձաքննությունը.
Միության ապրանքային նշանի հայտի հրապարակումը

1. Ներկայացման գերատեսչությունը Միության ապրանքային նշանի հայտն

ստանալու օրվանից 1 ամսվա ընթացքում ստուգում է ներկայացված փաստաթղթերի ձեւակերպման եւ տուրքի վճարման ճշտությունը՝ սույն Պայմանագրի 4-րդ հոդվածի եւ Հրահանգի պահանջներին համապատասխան, Միության ապրանքային նշանի հայտը ներկայացնելու օրը սահմանելու համար անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների առկայությունը, այդ թվում՝ ապրանքների ցանկի կազմման ու դրանց դասակարգման ճշտությունը։

2. Եթե հայտում բացակայում է սույն Պայմանագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված որեւէ տարր, ապա ներկայացման գերատեսչությունը որոշում է ընդունում Միության ապրանքային նշանի հայտի՝ ուսումնասիրության համար ընդունումը մերժելու մասին։

3. Սույն Պայմանագրի 4-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերում նշված հայտի նյութերի սխալ ձեւակերպման կամ սույն Պայմանագրի 4-րդ հոդվածի 4-րդ կետում նշված փաստաթղթի կամ Հրահանգով նախատեսված այլ փաստաթղթերի բացակայության կամ ոչ ճիշտ ձեւակերպման դեպքում ներկայացման գերատեսչությունը հայտատուին հարցում է ուղարկում՝ հարցումն ուղարկելու օրվանից եռամսյա ժամկետում պակաս փաստաթղթերը ներկայացնելու եւ (կամ) նշված թերությունները վերացնելու վերաբերյալ։

Մինչեւ նշված ժամկետի ավարտը հայտատուն իրավունք ունի ներկայացման գերատեսչություն ներկայացնելու հարցմանը պատասխանելու ժամկետը երկարաձգելու մասին միջնորդություն։

Հարցմանը պատասխան ներկայացնելու ժամկետը ներկայացման գերատեսչության կողմից երկարաձգվում է հայտատուի միջնորդության մեջ նշված ժամկետով, սակայն հարցմանը պատասխանելու ժամկետը լրանալու օրվանից ոչ ավելի, քան 3 ամսով՝ ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված չափով տուրքը վճարելու պայմանով։

Ներկայացման գերատեսչության կողմից սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ փաստաթղթերի ուսումնասիրության ժամկետի հաշվարկը կասեցվում է հարցմանը պատասխանելու համար հայտատուին անհրաժեշտ

ժամանակով՝ հաշվի առնելով սույն կետի երրորդ պարբերությամբ նախատեսված պահանջները։

Եթե սույն կետով սահմանված ժամկետում հարցման մեջ նշված պակաս փաստաթղթերը չեն ներկայացվում, եւ (կամ) թերությունները չեն վերացվում, ապա ներկայացման գերատեսչությունը որոշում է կայացնում Միության ապրանքային նշանի հայտի՝ ուսումնասիրության համար ընդունումը մերժելու մասին, ինչի մասին հայտատուին ծանուցում է ուղարկվում այդպիսի որոշում ընդունելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում։

Իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ չեն իրականացվում Միության ապրանքային նշանի այն հայտի առնչությամբ, որի վերաբերյալ դրա՝ ուսումնասիրության համար ընդունելու մերժման մասին որոշում է ընդունվել։

Սույն կետի առաջին պարբերության մեջ նշված դեպքերում Միության ապրանքային նշանի հայտի քննարկման ժամկետը երկարաձգվում է, սակայն հարցման պատասխանը ստանալու կամ պակաս փաստաթղթերը ներկայացնելու օրվանից ոչ ավելի, քան 1 ամսով։

4. Միության ապրանքային նշանի հայտ ներկայացնելու ամսաթիվը սահմանվում է այն ամսաթվով, որով ներկայացման գերատեսչություն է ներկայացվել սույն Պայմանագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված բոլոր տարրերը պարունակող՝ Միության ապրանքային նշանի հայտը։

5. Եթե Միության ապրանքային նշանի հայտը, այդ թվում՝ փոխակերպված հայտը համապատասխանում է սույն Պայմանագրի 4-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ապա ներկայացման գերատեսչությունը որոշում է ընդունում հայտը պաշտոնական կայքում հրապարակելու մասին եւ այդպիսի որոշումն ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին ծանուցում է Միության ապրանքային նշանի հայտ ներկայացնելու ամսաթիվը սահմանելու մասին, ինչպես նաեւ մյուս անդամ պետությունների ազգային արտոնագրային գերատեսչություններ հարցում է ուղարկում՝ հայտարկված նիշի

փորձաքննությունն անցկացնելու համար տուրքի գումարի եւ նշված տուրքը վճարելու համար վճարային վավերապայմանների նշումով փաստաթուղթը ներկայացնելու վերաբերյալ։

Բաց հասանելիությամբ պաշտոնական կայքում Միության ապրանքային նշանի հայտի հրապարակումն իրականացվում է հայտատուին նշված ծանուցումն ուղարկելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում։

Միության ապրանքային նշանի հայտի հրապարակման ամսաթիվը պաշտոնական կայքում այն տեղադրելու ամսաթիվն է։

6. Ազգային արտոնագրային գերատեսչությունները հարցումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացման գերատեսչություն են ուղարկում փաստաթուղթ՝ նշելով հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար տուրքի գումարը եւ նշված տուրքը վճարելու համար վճարային վավերապայմանները։

Հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար տուրքերի չափերը (այդ թվում նաեւ այն դեպքում, երբ Միության ապրանքային նշանի գրանցումը խնդրարկվում է մեկից ավելի դասերի ապրանքների նկատմամբ՝ Ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգմանը համապատասխան) սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ։

7. Ներկայացման գերատեսչությունը սույն հոդվածի 6-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին ծանուցում է ուղարկում հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար տուրքերը վճարելու անհրաժեշտության մասին՝ կցելով այդպիսի տուրքերի գումարների եւ դրանց վճարման համար վճարային վավերապայմանների նշումով փաստաթղթերը։

8. Հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված չափերով տուրքերը վճարելու անհրաժեշտության մասին ծանուցումն ուղարկելու օրվանից 1 ամսվա ընթացքում

հայտատուն ներկայացման գերատեսչություն է ներկայացնում հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար տուրքերի՝ սահմանված չափով կատարված վճարման մասին տեղեկությունները պարունակող փաստաթղթերը։

Նշված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Միության ապրանքային նշանի հայտը համարվում է հետ կանչված, ինչի մասին ներկայացման գերատեսչությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է ուղարկում հայտատուին։

9. Հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար տուրքերի վճարումը կատարված լինելու մասին տեղեկությունները պարունակող փաստաթղթերն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացման գերատեսչությունն այլ անդամ պետությունների ազգային արտոնագրային գերատեսչություններ է ուղարկում Միության ապրանքային նշանի հրապարակված հայտը եւ հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար տուրքերի վճարումը կատարված լինելու մասին տեղեկությունները պարունակող փաստաթղթերը։

Հոդված 7

Շահագրգիռ անձանց դիմումները՝ Միության ապրանքային նշանի հրապարակված հայտի վերաբերյալ

1. Միության ապրանքային նշանի հայտի հրապարակման օրվանից 3 ամսվա ընթացքում ցանկացած շահագրգիռ անձ, որի իրավունքները եւ օրինական շահերը խախտվել են Միության ապրանքային նշանի հայտ ներկայացնելու կապակցությամբ, իրավասու է ներկայացման գերատեսչություն ներկայացնելու հայտարկված նիշը՝ սույն Պայմանագրի 8-րդ հոդվածով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու մասին իր դիմումը։

2. Ներկայացման գերատեսչությունը հայտատուին ծանուցում է շահագրգիռ անձանց կողմից ստացված դիմումների մասին եւ սույն հոդվածի 1-ին կետում

նշված ժամկետը լրանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում դրանք տեղադրում է պաշտոնական կայքում։

Հայտատուն իրավասու է շահագրգիռ անձանց դիմումների վերաբերյալ իր փաստարկները ներկայացման գերատեսչություն ներկայացնելու՝ շահագրգիռ անձանց դիմումների ստացման մասին ծանուցումն իրեն ուղարկելու օրվանից 3 ամսվա ընթացքում։

Հոդված 8

Միության ապրանքային նշանի գրանցումը մերժելու հիմքերը

1. Սույն Պայմանագրին եւ Հրահանգին համապատասխան՝ որպես Միության ապրանքային նշաններ չեն կարող գրանցվել այն նիշերը՝

1) որոնց վրա չի տարածվում սույն Պայմանագրի գործողությունը.

2) որոնք չունեն տարբերակիչ հատկանիշ.

3) որոնք նկարագրական են, մասնավորապես՝ բաղկացած են միայն այն տարրերից, որոնք՝

օգտագործվում են ապրանքների տեսակը, որակը, քանակը, հատկությունները, նշանակությունը, արժեքը, ինչպես նաեւ դրանց արտադրության կամ սպառման ժամանակը, վայրը եւ միջոցը նշելու համար.

համընդհանուր օգտագործման մեջ են մտել որոշակի տեսակի ապրանքներ նշելու համար.

համընդհանուր ճանաչում ունեցող խորհրդանիշներ եւ եզրույթներ են.

ապրանքի ձեւ կամ փաթեթվածք են՝ պայմանավորված բացառապես կամ գլխավորապես ապրանքի հատկությամբ կամ նշանակությամբ.

4) որոնք հակասում են հանրային շահերին, հասարակական կարգին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին.

5) որոնք կեղծ են կամ կարող են սպառողին մոլորության մեջ գցել ապրանքի, դրա ծագման վայրի կամ արտադրողի վերաբերյալ հարցում.

6) որոնք պետական խորհրդանիշներ եւ նշաններ են (դրոշներ, զինանշաններ, շքանշաններ, դրամանիշներ եւ այլն), պետությունների ամբողջական կամ կրճատ պաշտոնական անվանումներ, միջազգային միջկառավարական կազմակերպությունների անվանումներ, դրանց դրոշները, զինանշաններ, այլ խորհրդանիշներ, նշաններ եւ դրանց տարրերը, պաշտոնական վերահսկողական, երաշխիքային եւ հարգորոշիչ դրոշմներ, կնիքներ, պարգեւներ եւ այլ տարբերանշաններ կամ նշված օբյեկտներին շփոթելու աստիճան նման նիշեր: Այդպիսի նիշերը կարող են Միության ապրանքային նշանի մեջ ներառվել որպես չպահպանվող տարրեր, եթե դրա վերաբերյալ առկա է համապատասխան իրավասու պետական մարմնի, միջազգային կամ միջկառավարական կազմակերպության համաձայնությունը.

7) որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են անդամ պետությունների ժողովուրդների մշակութային ժառանգության օբյեկտների կամ համաշխարհային մշակութային կամ բնական ժառանգության օբյեկտների պաշտոնական անվանումներին եւ պատկերներին.

8) որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են անդամ պետությունների տարածքներում սահմանված կարգով գրանցված սերտիֆիկացման նշաններին կամ համապատասխանության նշաններին:

2. Սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ եւ 3-րդ ենթակետերում նշված նիշերը կարող են, որպես չպահպանվող նիշեր, ներառվել Միության ապրանքային նշանի մեջ, եթե այդ նիշերը դրա մեջ գերիշխող մաս չեն զբաղեցնում:

Սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ եւ 3-րդ ենթակետում նշված նիշերը կարող են գրանցվել որպես Միության ապրանքային նշան, եթե Միության ապրանքային նշանի հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հայտարկված նիշն օգտագործելու արդյունքում բոլոր անդամ պետությունների տարածքներում ձեռք է բերել տարբերակիչ հատկանիշ:

Սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ եւ (կամ) 3-րդ ենթակետերում նշված նիշերի համակցությունը կարող է գրանցվել որպես Միության ապրանքային նշան, եթե այն ունի տարբերակիչ հատկանիշ։

3. Որպես Միության ապրանքային նշաններ չեն կարող գրանցվել այն նիշերը, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են՝

1) այն նիշերին, որոնք անդամ պետություններից որեւէ մեկում այլ անձանց կողմից հայտարկված են գրանցման՝ համանման ապրանքների համար, եւ ունեն ավելի վաղ առաջնություն, եթե այլ անձի՝ ապրանքային նշանի գրանցման հայտը հետ չի կանչվել, կամ դրա վերաբերյալ չի ընդունվել ուսումնասիրության համար դրա ընդունումը, գրանցումը մերժելու մասին որոշում.

2) համանման ապրանքների համար այլ անձանց ապրանքային նշաններին, որոնք պահպանվում են անդամ պետություններից մեկում եւ ունեն ավելի վաղ առաջնություն.

3) այլ անձանց ապրանքային նշաններին, որոնք անդամ պետություններից մեկում՝ հայտարկված նիշի առաջնությունից ավելի վաղ ամսաթվից են ճանաչվել որպես հանրահայտ ապրանքային նշաններ եւ այդ պետությունում պահպանվում են տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

4. Այն դեպքում, երբ անդամ պետությունների տարածքներում շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների նկատմամբ կամ համանման ապրանքների համար առաջնության ավելի վաղ ամսաթիվ ունեցող հայտարկված նիշերի նկատմամբ իրավունքները պատկանում են տարբեր անձանց, ապա Միության ապրանքային նշանի իրավական պահպանություն տրամադրելու համար պահանջվում է բոլոր իրավատերերի համաձայնությունը։

Կոլեկտիվ նշաններին շփոթելու աստիճան նման նիշերի նկատմամբ սույն կետի առաջին պարբերության դրույթները չեն կիրառվում։

5. Ցանկացած ապրանքների համար որպես Միության ապրանքային նշաններ չեն կարող գրանցվել այն նիշերը, որոնք նույնական կամ շփոթելու

աստիճան նման են սույն Պայմանագրին կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան պահպանվող ապրանքի ԱԾՏ-ին եւ այն նիշին, որը, որպես այդպիսին, գրանցման համար հայտարկվել է մինչեւ Միության ապրանքային նշանի առաջնության ամսաթիվը, եթե Միության ապրանքային նշանի այդպիսի գրանցումը կարող է սպառողին մոլորության մեջ գցել ապրանքի ծագման վայրի եւ (կամ) արտադրողի վերաբերյալ հարցերում: Այդ ԱԾՏ-ն կամ դրան շփոթելու աստիճան նման նիշը կարող է որպես չպահպանվող տարր ներառվել Միության այն ապրանքային նշանի մեջ, որը գրանցվում է այդ ԱԾՏ-ի օգտագործման իրավունքն ունեցող անձի անունով, եթե Միության ապրանքային նշանի գրանցումն իրականացվում է այն նույն ապրանքների համար, որոնց անհատականացման նպատակով գրանցվել է ԱԾՏ-ն:

6. Համանման ապրանքների համար որպես Միության ապրանքային նշաններ չեն կարող գրանցվել այն նիշերը, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են անդամ պետություններից մեկում պահպանվող ֆիրմային անվանման կամ առեւտրային նիշի (այդ անվանման կամ նիշի առանձին տարրերին) կամ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան գրանցված սելեկցիոն նվաճման այն անվանմանը, որի նկատմամբ իրավունքներն անդամ պետության տարածքում այլ անձանց մոտ ծագել են գրանցվող Միության ապրանքային նշանի առաջնության ամսաթվից ավելի վաղ:

7. Որպես Միության ապրանքային նշաններ չեն կարող գրանցվել այն նիշերը, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են հետեւյալ օբյեկտներին՝

1) գիտության, գրականության կամ արվեստի՝ անդամ պետություններից մեկում հայտնի ստեղծագործության անվանում, այդ ստեղծագործությունից կերպար կամ մեջբերում, արվեստի ստեղծագործություն կամ դրա հատված՝ առանց իրավատիրոջ համաձայնության, եթե համապատասխան ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագել է գրանցվող Միության ապրանքային նշանի առաջնության ամսաթվից ավելի վաղ.

2) անդամ պետություններից մեկում հայտնի անձի ազգանուն, անուն, կեղծանուն կամ դրանցից ածանցված նիշ, դիմանկար կամ ֆաքսիմիլե՝ առանց այդ անձի կամ նրա ժառանգների կամ նրանց իրավահաջորդների կամ այլ շահագրգիռ անձանց համաձայնության, որոնք իրականացնում են այդ անձի պատվի եւ արժանապատվության պաշտպանություն նրա մահվանից հետո .

3) արդյունաբերական նմուշ, որի նկատմամբ իրավունքներն անդամ պետությունում ծագել են գրանցվող Միության ապրանքային նշանի առաջնության ամսաթվից ավելի վաղ եւ չեն պատկանում հայտատուին:

Հոդված 9

Որպես Միության ապրանքային նշան գրանցման համար
հայտարկված նիշի փորձաքննությունը

1. Միության ապրանքային նշանի հրապարակված հայտը եւ հայտարկված նիշի փորձաքննությունն անցկացնելու համար տուրքերի վճարումը կատարված լինելու մասին տեղեկությունները պարունակող փաստաթղթերը ներկայացման գերատեսչության կողմից ուղարկվելու օրվանից 6 ամսվա ընթացքում ազգային արտոնագրային գերատեսչությունների, այդ թվում՝ ներկայացման գերատեսչության կողմից անցկացվում է փորձաքննություն, որի ընթացքում ստուգվում է Միության ապրանքային նշանի գրանցումը մերժելու համար՝ սույն Պայմանագրի 8-րդ հոդվածի 1-5-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությունը:

2. Փորձաքննության արդյունքներով ազգային արտոնագրային գերատեսչությունների կողմից պատրաստվում են եզրակացություններ, որոնք կցվող հակադրելի նյութերի հետ միասին ներառում են որոնման եւ ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկություններ, եթե դրանք հայտնաբերվել են: Եզրակացության տվյալները ուղարկվում են ներկայացման գերատեսչություն սույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետից ոչ ուշ:

Այն ազգային արտոնագրային գերատեսչությունները, որոնք սույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետում ներկայացման գերատեսչություն չեն ներկայացնի Միության ապրանքային նշանի գրանցումը մերժելու համար հիմքերի առկայության մասին տեղեկություններ, Միության ապրանքային նշանի հայտի առնչությամբ կորցնում են այդպիսի պատճառների առկայության մասին ծանուցման իրավունքը:

3. Այն դեպքում, երբ համանման ապրանքների համար նույնական կամ շփոթելու աստիճան նման Միության ապրանքային նշանների հայտերը ներկայացված են տարբեր հայտատուների կողմից, եւ այդ հայտերն ունեն առաջնության նույն ամսաթիվը, ապա համանման ապրանքների համար Միության ապրանքային նշանը կարող է գրանցվել հայտատուներից միայն մեկի անունով, որը որոշվում է նրանց միջեւ համաձայնությամբ:

4. Այն դեպքում, երբ ապրանքների ամբողջովին կամ մասամբ համընկնող ցանկերի համար նույնական կամ շփոթելու աստիճան նման Միության ապրանքային նշանների հայտերը ներկայացված են միեւնույն հայտատուի կողմից, եւ այդ հայտերն ունեն առաջնության նույն ամսաթիվը, ապա Միության ապրանքային նշանն այն ապրանքների համար, որոնց մասով նշված ցանկերը համընկնում են, կարող է գրանցվել հայտերից միայն մեկով, որն ընտրում է հայտատուն:

5. Սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված դեպքերում ներկայացման գերատեսչությունը հայտատուներին ուղարկում է համապատասխան ծանուցումներ:

Այդպիսի ծանուցում ստանալու օրվանից 6 ամսվա ընթացքում հայտատուները պետք է ներկայացման գերատեսչությանը հաղորդեն, թե հայտերից որ մեկով է խնդրարկվում Միության ապրանքային նշանի գրանցումը, իսկ Միության նույնական ապրանքային նշանների հայտեր ներկայացրած հայտատուն՝ իր ընտրության մասին:

Եթե նշված հաղորդագրությունը սահմանված ժամկետում չի ստացվում,

ապա հայտերը համարվում են հետ կանչված, ինչի մասին այդ ժամկետը լրանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուներին ծանուցում է ուղարկվում։

6. Ներկայացման գերատեսչությունը, ազգային արտոնագրային գերատեսչությունների եզրակացությունների, այդ թվում՝ սեփական եզրակացության, ինչպես նաեւ սույն Պայմանագրի 7-րդ հոդվածով նախատեսված դիմումների եւ փաստարկների հիման վրա, հայտատուին ուղարկում է փորձաքննության արդյունքների մասին ծանուցում՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետը լրանալու օրվանից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր։

Այդպիսի ծանուցում ուղարկվում է այն դեպքում, երբ ապրանքային նշանին չի կարող տրամադրվել պահպանություն կամ կարող է տրամադրվել հայտատուի կողմից խնդրարկվող ծավալից ավելի քիչ ծավալով։ Ազգային արտոնագրային գերատեսչությունների եզրակացությունները, այդ թվում՝ ներկայացման գերատեսչության եզրակացությունը կցվում են ծանուցմանը։

7. Հայտատուն իրավունք ունի ներկայացման գերատեսչություն ներկայացնելու հայտարկված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի համար Միության ապրանքային նշանի հայտի փորձաքննության արդյունքների մասին ծանուցման հետ կապված իր փաստարկները եւ դիտողությունները (այսուհետ՝ փաստարկներ եւ դիտողություններ)՝ նման ծանուցումը նրան ուղարկվելու օրվանից 3 ամսվա ընթացքում։

Հայտատուի միջնորդությամբ նշված ժամկետը կարող է լրացուցիչ երկարաձգվել մինչեւ 3 ամիս ժամկետով՝ տուրքը ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված չափով վճարելու պայմանով։

Եթե սահմանված ժամկետի ընթացքում փաստարկներ եւ դիտողություններ չեն ներկայացվում, ապա ներկայացման գերատեսչությունն այդ ժամկետը լրանալու օրվանից 1 ամսվա ընթացքում որոշում է ընդունում ըստ Միության

ապրանքային նշանի հայտի փորձաքննության արդյունքների:

Ներկայացման գերատեսչությունը փաստարկները եւ դիտողությունները, ինչպես նաեւ սույն կետի երկրորդ պարբերությունում նշված միջնորդությունն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր հետո դրանց մասին ծանուցում է ազգային արտոնագրային գերատեսչություններին:

Ազգային արտոնագրային գերատեսչությունները փաստարկներ եւ դիտողություններ ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից 1 ամսվա ընթացքում ուսումնասիրում են դրանք եւ ընդունում են համապատասխան որոշումներ, որոնք ընդունման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են ներկայացման գերատեսչություն:

Ներկայացման գերատեսչությունը նշված որոշումները հայտատուին է ուղարկում դրանք ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

8. Մինչեւ ներկայացման գերատեսչության կողմից Միության ապրանքային նշանը գրանցելու կամ դրա գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունելը հայտատուն իրավունք ունի դիմելու ներկայացման գերատեսչություն՝ միջնորդություն ներկայացնելով՝

1) ապրանքների ցանկը կրճատելու վերաբերյալ, որոնց նկատմամբ Միության ապրանքային նշանի հայտ է ներկայացված.

2) Միության ապրանքային նշանի հայտը հետ կանչելու վերաբերյալ.

3) Միության ապրանքային նշանի հայտն առաջնության ամսաթվի պահպանմամբ ապրանքային նշանի գրանցման ազգային հայտի փոխակերպելու վերաբերյալ՝ Հրահանգի պահանջները պահպանելու պայմանով.

4) Միության ապրանքային նշանի հայտն առանձնացնելու վերաբերյալ՝ Հրահանգի պահանջները կատարելու պայմանով:

9. Միության ապրանքային նշանի հայտն առաջնության ամսաթվի պահպանմամբ ապրանքային նշանի գրանցման ազգային հայտի փոխակերպելու

վերաբերյալ սույն հոդվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հայտատուի միջնորդության ուսումնասիրության արդյունքներով ներկայացման գերատեսչությունը դադարեցնում է Միության ապրանքային նշանի հայտի առնչությամբ գործավարությունը եւ այդ մասին ծանուցում է հայտատուին: Միջնորդությունն ու հայտի բոլոր նյութերն ուղարկվում են այն ազգային արտոնագրային գերատեսչություն, որտեղ հայտատուն դիմում է Միության ապրանքային նշանի իր հայտի՝ ապրանքային նշանի գրանցման ազգային հայտի փոխակերպման ընթացակարգն իրականացնելու խնդրանքով:

Ազգային արտոնագրային գերատեսչությունը իրականացնում է Միության ապրանքային նշանի հայտը ապրանքային նշանի գրանցման ազգային հայտի փոխակերպելը, որն ընդունվում է որպես ապրանքային նշանի գրանցման ճիշտ լրացված ազգային հայտ:

Նշված փոխակերպման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ազգային արտոնագրային գերատեսչությունը հայտատուին է ուղարկում այդպիսի փոխակերպման մասին ծանուցում:

Ապրանքային նշանի փոխակերպված հայտի առնչությամբ հետագա գործավարությունն իրականացվում է ազգային արտոնագրային գերատեսչության կողմից՝ պահպանելով առաջնության ամսաթիվը: Ապրանքային նշանի գրանցման ազգային հայտով որոշումն ընդունվում է յուրաքանչյուր ազգային արտոնագրային գերատեսչության կողմից՝ իր կողմից պատրաստված եզրակացության հիման վրա:

Հայտատուի միջնորդությունը ներկայացնելու եւ ուսումնասիրելու, ինչպես նաեւ ապրանքային նշանի գրանցման ազգային հայտի փորձաքննություն անցկացնելու համար այս դեպքում տուրք չի գանձվում:

10. Միության ապրանքային նշանի հայտն առանձնացնելու մասին սույն հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված միջնորդությունը պետք է պարունակի այն ապրանքների ցանկը, որոնք վերցված են Միության ապրանքային նշանի սկզբնական հայտում նշվածների թվից՝ ներկայացման գերատեսչություն այն ներկայացնելու ամսաթվի դրությամբ, եւ որոնք համանման չեն Միության

ապրանքային նշանի սկզբնական հայտում պարունակվող ապրանքների ցանկի մյուս ապրանքներին, եւ որոնց մասով Միության ապրանքային նշանի սկզբնական հայտն ուժի մեջ է մնում։

Հոդված 10

Միության ապրանքային նշանի հայտում փոփոխություններ կատարելը

1. Մինչեւ Միության ապրանքային նշանի գրանցման մասին որոշումը կայացնելը հայտատուն իրավունք ունի Միության ապրանքային նշանի հայտում փոփոխություններ կատարելու։

Միության ապրանքային նշանի հայտում փոփոխություններ կատարելու մասին միջնորդությունը ներկայացվում է ներկայացման գերատեսչություն։

2. Միության ապրանքային նշանի հայտում նշված հայտարկվող նիշի էական փոփոխության կամ ապրանքների ցանկի ընդլայնման դեպքում միջնորդությունը մերժվում է։ Այսպիսի փոփոխությունները կարող են հայտատուի կողմից ձեւակերպվել որպես ինքնուրույն հայտ։

Ներկայացման գերատեսչությունը սույն հոդվածի 1-ին կետում նշված փոփոխությունները կատարում է Միության ապրանքային նշանի հայտի մեջ։ Հայտատուի, հայտատուի ներկայացուցչի (եթե նա նույնն է մնում) ազգանվան, անվան, հայրանվան (առկայության դեպքում), հասցեի կամ անվանման եւ (կամ) նամակագրության համար հացսեի փոփոխության դեպքում կամ Միության ապրանքային նշանի հայտի նկատմամբ իրավունքն այլ անձի փոխանցվելու կամ անցնելու դեպքում հայտատուն պարտավոր է, նախքան որոշումն ընդունվելը, ներկայացման գերատեսչություն ներկայացնել հայտի նյութերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին միջնորդություն։

3. Ներկայացման գերատեսչությունը ծանուցում է հայտատուին եւ ազգային

արտոնագրային գերատեսչություններին հայտի նյութերում փոփոխություններ կատարելու մասին միջնորդության քննարկման արդյունքների մասին։

4. Միության ապրանքային նշանի հայտի նյութերում փոփոխություններ կատարելու համար վճարվում է տուրք՝ ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված չափով։

Հոդված 11

Ազգային արտոնագրային գերատեսչությունների որոշումների բողոքարկումը

1. Սույն Պայմանագրի 9-րդ հոդվածի 7-րդ կետի հինգերորդ պարբերության համաձայն ընդունվող ազգային արտոնագրային գերատեսչության որոշման հետ համաձայն չլինելու դեպքում հայտատուն իրավունք ունի նշված որոշումը ներկայացման գերատեսչության կողմից ուղարկվելու օրվանից 3 ամսվա ընթացքում ազգային արտոնագրային գերատեսչություն առարկություն (բողոք) (այսուհետ՝ առարկություն (բողոք)) ուղարկելու այդ որոշման դեմ։

2. Առարկությունները (բողոքները) ներկայացվում են ազգային արտոնագրային գերատեսչություններ՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան։

3. Ազգային արտոնագրային գերատեսչությունը ներկայացման գերատեսչությանը ծանուցում է ստացված առարկության (բողոքի) մասին դրա ստացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում։

4. Առարկությունները (բողոքները) քննվում են ազգային արտոնագրային գերատեսչությունում դրանց ստացման օրվանից 3 ամիսը չգերազանցող ժամկետում։

5. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետի ընթացքում ներկայացման գերատեսչությունն ազգային արտոնագրային գերատեսչությունից ծանուցում չի ստանում առարկության (բողոքի) մասին,

ներկայացման գերատեսչությունն այդ ժամկետը լրանալու օրվանից 1 ամսվա ընթացքում որոշում է ընդունում հայտարկված ապրանքների մի մասի համար Միության ապրանքային նշանի գրանցման կամ Միության ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին:

6. Ազգային արտոնագրային գերատեսչության որոշումը հայտատուի կողմից բողոքարկվելու դեպքում Միության ապրանքային նշանի հայտի վերաբերյալ որոշումը ներկայացման գերատեսչության կողմից ընդունվում է պայմանով, որ սպառվել են ներպետական մակարդակով բողոքարկման բոլոր հնարավորությունները:

7. Ազգային արտոնագրային գերատեսչությունը ներպետական մակարդակով բողոքարկման ընթացակարգերի ավարտի մասին տեղեկացնում է ներկայացման գերատեսչությանը:

Հոդված 12

Միության ապրանքային նշանի հայտի փորձաքննության արդյունքներով ընդունվող որոշումները

1. Ազգային արտոնագրային գերատեսչությունների, այդ թվում՝ ներկայացման գերատեսչության՝ սույն Պայմանագրի 9-րդ հոդվածի դրույթներին համապատասխան պատրաստված (ընդունված) եզրակացությունների եւ որոշումների հիման վրա (եթե դրանք ընդունվել են) եւ հաշվի առնելով սույն Պայմանագրի 11-րդ հոդվածի դրույթներին համապատասխան այդպիսի որոշումները բողոքարկելու արդյունքները (եթե դրանք բողոքարկվել են)՝ ներկայացման գերատեսչությունը Միության ապրանքային նշանի հայտի փորձաքննության արդյունքներով ընդունում է հետեւյալ որոշումներից մեկը՝

1) հայտարկված ապրանքների համար Միության ապրանքային նշանի գրանցման մասին որոշում: Այդպիսի որոշումն ընդունվում է այն դեպքում, երբ այն ապրանքների ամբողջ ցանկի համար Միության ապրանքային նշանի պահպանություն տրամադրելու հնարավորության մասին եզրահանգումը, որոնց

համար խնդրարկվում է Միության ապրանքային նշանի գրանցումը, պարունակվում է սույն Պայմանագրի 9-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ժամկետի ընթացքում պատրաստված բոլոր եզրակացություններում կամ սույն կետի առաջին պարբերությունում նշված բոլոր եզրակացություններում (որոշումներում).

2) հայտարկված ապրանքների մի մասի համար Միության ապրանքային նշանի գրանցման մասին որոշում: Այսպիսի որոշումն ընդունվում է այն դեպքում, երբ սույն կետի առաջին պարբերության մեջ նշված եզրակացություններից (որոշումներից) գոնե մեկում պարունակվում է այն ապրանքների որոշակի մասի համար Միության ապրանքային նշանի իրավական պահպանություն տրամադրելու անհնարինության մասին եզրահանգում, որոնց համար խնդրարկվում է Միության ապրանքային նշանի գրանցումը: Ընդ որում, Միության ապրանքային նշանի գրանցման մասին որոշումն ընդունվում է հայտարկված ապրանքների այն մասի համար, որի մասով սույն կետի առաջին պարբերության մեջ նշված բոլոր եզրակացությունների (որոշումների) մեջ Միության ապրանքային նշանի պահպանություն տրամադրելու հնարավորության մասին պարունակվում է եզրահանգում.

3) Միության ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշում: Այդպիսի որոշումն ընդունվում է այն դեպքում, երբ սույն կետի առաջին պարբերության մեջ նշված եզրակացություններից (որոշումներից) գոնե մեկում պարունակվում է եզրահանգում այն ապրանքների ամբողջ ցանկի համար Միության ապրանքային նշանի պահպանություն տրամադրելու անհնարինության մասին, որոնց համար խնդրարկվում է Միության ապրանքային նշանի գրանցումը:

2. Միության ապրանքային նշանը հայտարկված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի համար գրանցելու մասին կամ Միության ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումն ուղարկվում է հայտատուին եւ ազգային արտոնագրային գերատեսչություններ դրա ընդունման օրվանից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր հետո:

Հայտատուի կողմից Միության ապրանքային նշանը գրանցելու մասին որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 1 ամսվա ընթացքում նա ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված չափով վճարում է Միության ապրանքային նշանի գրանցման եւ Միության ապրանքային նշանի վկայագիրը հանձնելու համար տուրքը։

3. Միության ապրանքային նշանի գրանցման եւ Միության ապրանքային նշանի վկայագիրը հանձնելու համար տուրքի վճարման մասին վկայող փաստաթուղթը հայտատուի կողմից չներկայացվելու դեպքում Միության ապրանքային նշանի հայտը համարվում է հետ կանչված, վկայագիր չի տրամադրվում, ինչի մասին ներկայացման գերատեսչությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է ուղարկում հայտատուին։

Հոդված 13

Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրը

1. Միության ապրանքային նշանի գրանցման մասին որոշման հիման վրա՝ ներկայացման գերատեսչությունը Միության ապրանքային նշանի գրանցման եւ Միության ապրանքային նշանի վկայագիրը հանձնելու համար տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը հայտատուի կողմից ներկայացվելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրում գրանցում է Միության ապրանքային նշանը եւ հանձնում Միության ապրանքային նշանի վկայագիրը։

Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրում ընդգրկվող տեղեկությունների կազմը, ինչպես նաեւ Միության ապրանքային նշանի վկայագրի ձեւը եւ դրանում նշվող տեղեկությունների կազմը սահմանվում են Հրահանգով։

2. Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրի ազգային բաժիններում տեղեկությունների հավաստիության եւ ամբողջականության համար պատասխանատվություն են կրում համապատասխան տեղեկատվությունը

տեղադրած ազգային արտոնագրային գերատեսչությունները։

3. Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրում ներառված տեղեկությունները Միության ապրանքային նշանի գրանցման մասին ազգային արտոնագրային գերատեսչությունների որոշումներում պարունակվող տեղեկություններին չհամապատասխանելու դեպքում գերակայություն ունեն նշված որոշումներում պարունակվող տեղեկությունները։

4. Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրի տեղեկություններում ուղղումների եւ փոփոխությունների կատարումն իրականացվում է Հրահանգով սահմանված կարգով, ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված չափով տուրքը վճարելու պայմանով։

5. Ազգային արտոնագրային գերատեսչությունը, որը վարում է Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրի ազգային բաժինը, տվյալ բաժնից քաղվածքը ձեւակերպում է ազգային արտոնագրային գերատեսչության ղեկավարի ստորագրությամբ։

Այդպիսի քաղվածքը հավասար իրավաբանական ուժ ունի բոլոր անդամ պետությունների տարածքներում։

Հոդված 14

Ապրանքային նշանի ազգային գրանցման փոխարինումը Միության ապրանքային նշանի գրանցմամբ

Եթե նույնական նիշն անդամ պետություններից յուրաքանչյուրում որպես ապրանքային նշան գրանցված է ապրանքների ամբողջովին կամ մասամբ համընկնող ցանկերի համար միեւնույն իրավատիրոջ անվամբ, ապա այդպիսի անձն իրավունք ունի իր ընտրությամբ ցանկացած ազգային արտոնագրային գերատեսչություն միջնորդություն ներկայացնելու Միության ապրանքային նշանի վկայագրի հանձնման մասին ։

Միության ապրանքային նշանի վկայագիրը տրվում է ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետով այն անդամ պետությունում, որտեղ այդ ժամկետն ամենաուշն է լրանում՝ վկայագրում անդամ պետություններից յուրաքանչյուրի տարածքում ամբողջովին համընկնող ապրանքների համար այդպիսի բացառիկ իրավունքի առաջնության ամսաթվի նշմամբ, ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված չափով Միության ապրանքային նշանի վկայագիրը գրանցելու եւ հանձնելու համար տուրքը վճարելու պայմանով։

Ազգային արտոնագրային գերատեսչությունները պարտավոր են ապրանքային նշանների ազգային ռեեստրներում նշում կատարել՝ Միության ապրանքային նշանը Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրում գրանցելու եւ նախորդող ազգային գրանցումն այդպիսի գրանցմամբ փոխարինելու մասին՝ առանց անդամ պետություններից յուրաքանչյուրում այդ նախորդող գրանցման ուժով ձեռք բերված իրավունքների ոտնահարման։

Հոդված 15

Միության ապրանքային նշանի իրավական պահպանության
տրամադրումն անվավեր ճանաչելը

Միության ապրանքային նշանի իրավական պահպանության տրամադրումը կարող է վիճարկվել եւ անվավեր ճանաչվել բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի համար ցանկացած անդամ պետության տարածքում՝ այդ պետության ազգային արտոնագրային գերատեսչություն, վերաքննիչ մարմին եւ (կամ) անմիջապես դատարան առարկություն (բողոք) ներկայացնելու միջոցով, եթե դիմելու այդպիսի կարգ սահմանված է համապատասխան պետության օրենսդրությամբ՝

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետում, եթե Միության ապրանքային նշանի իրավական

պահպանություն է տրամադրվել սույն Պայմանագրի 8-րդ հոդվածի 1-ին, 6-րդ եւ 7-րդ կետերին համապատասխան ներկայացվող պահանջների խախտմամբ.

Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրում Միության ապրանքային նշանի գրանցելու օրվանից 5 տարվա ընթացքում, եթե Միության ապրանքային նշանին չի կարող իրավական պահպանություն տրամադրվել սույն Պայմանագրի 8-րդ հոդվածի 3-րդ եւ 5-րդ կետերով սահմանված հիմքերով.

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում, եթե Միության ապրանքային նշանի կամ դրան շփոթելու աստիճան նման Միության մյուս ապրանքային նշանի իրավական պահպանություն տրամադրելու եւ դրա օգտագործման հետ կապված՝ իրավատիրոջ գործողությունները սահմանված կարգով ճանաչվել են իրավունքի չարաշահում կամ անբարեխիղճ մրցակցություն։

Հոդված 16

Միության ապրանքային նշանի իրավական պահպանության դադարեցումը

1. Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը դադարեցվում է՝

1) Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի ժամկետը լրանալու հետ կապված.

2) իրավատիրոջ՝ Միության ապրանքային նշանի նկատմամբ իրավունքից հրաժարվելու դեպքում.

3) Միության կոլեկտիվ նշանի իրավական պահպանության վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ դատարանի՝ այդ նշանը որակի միասնական բնութագրեր կամ այլ ընդհանուր բնութագրեր չունեցող ապրանքների վրա օգտագործելու հետ կապված որոշման հիման վրա.

4) իրավահաջորդի բացակայության դեպքում՝ ազգային արտոնագրային

գերատեսչության որոշման կամ Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա՝ ցանկացած անձի դիմումի համաձայն, հետեւյալ դեպքերում.

Միության ապրանքային նշանի իրավատեր հանդիսացող իրավաբանական անձի լուծարում (գործունեության դադարեցում),

Միության ապրանքային նշանի իրավատեր հանդիսացող ֆիզիկական անձի մահ.

5) ազգային արտոնագրային գերատեսչության որոշման կամ Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա՝ շահագրգիռ անձի դիմումի համաձայն՝ Միության ապրանքային նշանը որպես որոշակի տեսակի ապրանքների նիշ համընդհանուր օգտագործման մեջ մտած նիշ դառնալու դեպքում.

6) Միության ապրանքային նշանը չօգտագործելու հետեւանքով բոլոր ապրանքների համար դրա իրավական պահպանությունը վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա։ Եթե դատարանի որոշումը վերաբերում է ապրանքների միայն մի մասին, ապա Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը դադարեցվում է ապրանքների այդ մասի համար։

2. Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝ Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրում այն գրանցելու օրվանից ցանկացած 3 տարվա ընթացքում անընդմեջ չօգտագործելու հետեւանքով։

Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը՝ այն չօգտագործելու հետեւանքով վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմումը շահագրգիռ անձի կողմից ներկայացվում է դատարան նշված 3 տարին լրանալուց

հետո՝ պայմանով, որ ընդհուպ մինչեւ նման դիմում ներկայացնելը Միության ապրանքային նշանը չի օգտագործվել։

Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը՝ այն չօգտագործելու հետեւանքով վաղաժամկետ դադարեցնելու ընթացակարգերն իրականացնելու ժամանակ Միության ապրանքային նշանի գրանցումն ուժի մեջ թողնելու նպատակով հաշվի է առնվում Միության ապրանքային նշանի օգտագործումը ցանկացած անդամ պետության տարածքում։

Սույն Պայմանագրի նպատակներով Միության ապրանքային նշանի օգտագործում է համարվում դրա օգտագործումն իրավատիրոջ կամ այն անձի կողմից, որին այդպիսի իրավունք է տրամադրվել լիցենզային պայմանագրի հիման վրա, կամ իրավատիրոջ հսկողության ներքո Միության ապրանքային նշանի օգտագործումն իրականացնող այլ անձի կողմից (բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան գործողություններն անմիջականորեն կապված չեն ապրանքը քաղաքացիական շրջանառության մեջ դնելու հետ), ինչպես նաեւ Միության ապրանքային նշանի օգտագործումը՝ դրա տարբերակիչ հատկության վրա չազդող եւ Միության ապրանքային նշանին տրամադրված իրավական պահպանությունը չսահմանափակող դրա առանձին տարրերի փոփոխությամբ՝ հետեւյալի միջոցով.

Միության ապրանքային նշանի կիրառում այն ապրանքների վրա, որոնց համար այն գրանցված է, այդ ապրանքների պիտակների եւ փաթեթվածքների վրա,

Միության ապրանքային նշանով նշված ապրանքների պատրաստում, վաճառքի համար առաջարկում, վաճառք, պահպանում, ներմուծում,

Միության ապրանքային նշանի կիրառում աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ,

Միության ապրանքային նշանի կիրառում ցուցահանդեսներում եւ տոնավաճառներում ցուցադրության ժամանակ, գովազդում, տպագիր հրատարակություններում, ցուցանակներում, ապրանքները քաղաքացիական

շրջանառության մեջ դնելու հետ կապված փաստաթղթերում, «Ինտերնետ» տեղեկատվական հեռահաղորդակցության ցանցում, այդ թվում՝ դոմենային անվանման մեջ։

Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը՝ այն չօգտագործելու հետեւանքով վաղաժամկետ դադարեցնելու հարցի լուծման ժամանակ իրավատերը ներկայացնում է Միության ապրանքային նշանի օգտագործման վերաբերյալ ապացույցներ, ընդ որում, կարող են հաշվի առնվել իրավատիրոջ կողմից ներկայացված ապացույցներն այն մասին, որ Միության ապրանքային նշանը չի օգտագործվել՝ նրանից անկախ հանգամանքներով պայմանավորված։

3. Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը չի կարող անվավեր ճանաչվել սույն Պայմանագրի 15-րդ հոդվածին համապատասխան կամ դադարեցվել սույն հոդվածի 1-ին կետի 3-6-րդ ենթակետերով նախատեսված հիմքերով՝ առանց իրավատիրոջն իր իրավունքները պաշտպանելու համար բավականաչափ ժամանակ տրամադրելու։

Հոդված 17

Միության ապրանքային նշանի գրանցման չեղյալ ճանաչումը

1. Ազգային արտոնագրային գերատեսչությունները, դատարանները, ինչպես նաեւ շահագրգիռ անձինք, որոնց իրավունքներին առնչվում են նշված մարմինների որոշումները, ներկայացման գերատեսչությանը տեղեկացնում են սույն Պայմանագրի 15-րդ եւ 16-րդ հոդվածներին համապատասխան ընդունված՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան օրինական ուժի մեջ մտած որոշումների մասին։

Նշված որոշումները հիմք են հանդիսանում Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրում Միության ապրանքային նշանի գրանցումը Հրահանգով սահմանված կարգով չեղյալ ճանաչելու համար։

Միության ապրանքային նշանի գրանցումը ներկայացման գերատեսչության կողմից չեղյալ է ճանաչվում Միության ապրանքային նշանի իրավական պահպանության տրամադրումն անվավեր ճանաչելու կամ Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը դադարեցնելու հետ կապված։

2. Ապրանքների մի մասի համար Միության ապրանքային նշանի իրավական պահպանության տրամադրումն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշման կամ ապրանքների մի մասի համար Միության ապրանքային նշանի իրավական պահպանությունը վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ որոշման հիման վրա՝ ներկայացման գերատեսչությունը չեղյալ է ճանաչում Միության ապրանքային նշանի սկզբնական վկայագիրը եւ հանձնում է Միության ապրանքային նշանի նոր վկայագիր, որը հավաստում է ապրանքների ճշգրտված ցանկի վերաբերյալ Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը բոլոր անդամ պետությունների տարածքում՝ առաջնության ամսաթվի պահպանմամբ։

3. Միության ապրանքային նշանի գրանցումը, որը չեղյալ է ճանաչվել Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրում, կարող է Հրահանգով սահմանված պահանջների եւ կարգի կատարման պայմանով փոխակերպվել ազգային հայտի՝ ապրանքային նշանի առաջնության ամսաթվի պահպանմամբ՝ իրավատիրոջ կամ նրա իրավահաջորդի՝ ազգային արտոնագրային գերատեսչություն ներկայացրած միջնորդության հիման վրա։

Հոդված 18

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը տնօրինելը

1. Իրավատերն իրավունք ունի տնօրինելու Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը։

2. Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը կարող

է լինել իրավունքի փոխանցման (զիջման, օտարման), օգտագործման իրավունքի տրամադրման (լիցենզային (ենթալիցենզային) պայմանագիր, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համապարփակ լիցենզիայի պայմանագիր (առեւտրային կոնցեսիայի (ենթակոնցեսիայի) պայմանագիր), գրավի կամ անդամ պետության օրենսդրությամբ այդ անդամ պետությունում գրանցված ապրանքային նշանների համար նախատեսված ձեւերով այլ կերպ տնօրինման, ինչպես նաեւ համապարփակ իրավահաջորդության կարգով անցման օբյեկտ եւ իրավատիրոջ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում։

3. Միության ապրանքային նշանի բացառիկ իրավունքի փոխանցումը (զիջումը, օտարումը) պայմանագրով ենթակա է ներկայացման գերատեսչությունում գրանցման՝ ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը կարող է փոխանցվել (զիջվել, օտարվել) բոլոր ապրանքների կամ ապրանքների մի մասի համար այն դեպքում, երբ դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, եւ միայն բոլոր անդամ պետությունների տարածքներում այդպիսի փոխանցումը միաժամանակ իրականացնելու պայմանով։

Ապրանքների մի մասի համար Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի փոխանցման (զիջման, օտարման) դեպքում ներկայացման գերատեսչության կողմից հանձնվում է Միության ապրանքային նշանի նոր վկայագիր։

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի փոխանցման (զիջման, օտարման) մասին պայմանագիրը կազմվում է գրավոր՝ այն անդամ պետության օրենսդրության պահանջներին համապատասխան, որտեղ այդ փոխանցումը (զիջումը, օտարումը) ենթակա է գրանցման։

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի փոխանցումը (զիջումը, օտարումը), առանց պայմանագրի անցումը գրանցելու մասին տեղեկությունների ներկայացման, գերատեսչության կողմից

մուտքագրվում են Միության ապրանքային նշանների միասնական ռեեստր։

4. Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը կարող է գրավի առարկա լինել այն անդամ պետությունում (անդամ պետություններում), որի օրենսդրությամբ նախատեսվում է ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գրավ։

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գրավը ենթակա է գրանցման ներկայացման գերատեսչությունում՝ նշված գրավի գրանցման համար այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գրավի գրանցման մասին տեղեկությունները ներկայացման գերատեսչության կողմից մուտքագրվում են Միության ապրանքային նշանների միասնական ռեեստր։

5. Միության ապրանքային նշանի օգտագործման իրավունքի՝ լիցենզային, (ենթալիցենզային) կամ այլ պայմանագրով տրամադրումը ենթակա է գրանցման այն անդամ պետությունների ազգային արտոնագրային գերատեսչություններից որեւէ մեկում, որոնց տարածքներում տրամադրվում է Միության ապրանքային նշանի օգտագործման իրավունքը՝ ապրանքային նշանի օգտագործման իրավունքի տրամադրման գրանցման համար անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով։

Միության ապրանքային նշանի օգտագործման իրավունքի՝ (լիցենզային, ենթալիցենզային եւ (կամ) այլ) պայմանագրով տրամադրման գրանցման մասին տեղեկությունները ազգային արտոնագրային գերատեսչությունների կողմից մուտքագրվում են Միության ապրանքային նշանների միասնական ռեեստր։

6. Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի՝ պայմանագրով տնօրինման գրանցման համար վճարվում է այդպիսի տնօրինման գրանցման համար տուրք այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված չափով, որում իրականացվում է այդպիսի գրանցումը։

7. Լիցենզային պայմանագրի կամ այնպիսի այլ պայմանագրի կողմը

(կողմերը), որի միջոցով, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, տրամադրվում է Միության ապրանքային նշանի օգտագործման իրավունքը, Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գրավի մասին պայմանագրի կողմը (կողմերը) պարտավոր է (պարտավոր են) այդպիսի պայմանագրերի փոփոխության կամ գործողության դադարեցման մասին տեղեկացնել այն անդամ պետության ազգային արտոնագրային գերատեսչությանը, որի տարածքում տրամադրվում է Միության ապրանքային նշանի օգտագործման բացառիկ իրավունքը՝ պայմանագրի համապատասխան տեսակի համար այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

Առանց Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի տնօրինումը գրանցելու՝ Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրում այդպիսի տնօրինումը համարվում է անվավեր։ Գործարքի անվավերության հետեւանքները որոշվում են անդամ պետությունների օրենսդրությամբ։

Հոդված 19

Միության կոլեկտիվ նշանը տնօրինելու առանձնահատկությունները

1. Միության կոլեկտիվ նշանի նկատմամբ իրավունքը չի կարող օտարվել եւ չի կարող լինել լիցենզային պայմանագրի կամ այլ պայմանագրի առարկա, որի միջոցով տրամադրվում է դրա օգտագործման իրավունքը։

2. Միության կոլեկտիվ նշանը գրանցած միավորման մեջ մտնող անձն իրավունք ունի Միության կոլեկտիվ նշանի հետ մեկտեղ օգտվելու իր ապրանքային նշանից։

3. Միության կոլեկտիվ նշանի իրավատերը պարտավոր է ներկայացման գերատեսչությանը տեղեկացնել Միության կոլեկտիվ նշանի կանոնադրության (հիմնադրույթի) փոփոխությունների մասին։

4. Միության կոլեկտիվ նշանը եւ Միության կոլեկտիվ նշանի հայտը

կարող են փոխակերպվել համապատասխանաբար Միության ապրանքային նշանի եւ Միության ապրանքային նշանի հայտի եւ հակառակը՝ Հրահանգի պահանջներին համապատասխան ու ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված չափով տուրքը վճարելու պայմանով։

Գլուխ III

Միության ապրանքների ծագման տեղանունները

Հոդված 20

Միության ապրանքների ծագման տեղանունների գրանցման կարգը

1. Միության ԱԾՏ հայտը հայտատուի կողմից ներկայացվում է ներկայացման գերատեսչություն՝ Հրահանգով սահմանվող ձեւաչափով եւ կարգով։

Եթե հայտատուն անդամ պետության իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, ապա ներկայացման գերատեսչություն է այն պետության ազգային արտոնագրային գերատեսչությունը, որի տարածքում գտնվում է այն աշխարհագրական օբյեկտը, որի անվանումը (այդ անվանման ածանցյալը) հայտարկվում է գրանցման՝ որպես Միության ԱԾՏ։ Եթե հայտատուն Միության անդամ չհանդիսացող պետության իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, ապա ներկայացման գերատեսչություն կարող է լինել ցանկացած անդամ պետության ազգային արտոնագրային գերատեսչությունը։

2. Միության ԱԾՏ հայտը պետք է վերաբերի Միության մեկ ԱԾՏ-ի եւ պարունակի՝

1) հայտատուի անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում)) եւ գտնվելու (բնակության վայրի) հասցեն, ինչպես նաեւ ներկայացման գերատեսչության պետության տարածքում նամակագրություն

վարելու հասցեն.

2) հայտարկվող նիշը.

3) այն ապրանքի անվանման նշումը, որի նշման համար խնդրարկվում է գրանցումը եւ Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի տրամադրումը կամ Միության գրանցված ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի տրամադրումը՝ դրա արտադրության վայրի (աշխարհագրական օբյեկտի սահմանների) նշումով.

4) ապրանքի առանձնահատուկ հատկանիշների նկարագրությունը։

3. Միության ԱԾՏ հայտին կից ներկայացվում են հետեւյալ փաստաթղթերը՝

1) այն անդամ պետության իրավաբանական կամ ֆիզիկական անձի համար, որի տարածքում գտնվում է այն աշխարհագրական օբյեկտը, որի անվանումը (այդ անվանման ածանցյալը) հայտարկվում է գրանցման՝ որպես Միության ԱԾՏ՝ անդամ պետության լիազորված մարմնի եզրակացությունն այն մասին, որ հայտատուն արտադրում է ապրանք, որի առանձնահատուկ հատկանիշները որոշվում են տվյալ աշխարհագրական օբյեկտին բնորոշ բնապայմաններով եւ (կամ) մարդկային գործոններով.

2) Միության անդամ չհանդիսացող պետության իրավաբանական կամ ֆիզիկական անձի համար՝ փաստաթուղթ, որով հաստատվում է ապրանքի ծագման պետությունում Միության հայտարկված ԱԾՏ-ի օգտագործման այդպիսի անձի իրավունքը.

3) Միության ԱԾՏ հայտը ներկայացնելու եւ փորձաքննության համար ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված չափով տուրքերի վճարումը հաստատող փաստաթղթեր։

4. Միության ԱԾՏ հայտին, Միության ԱԾՏ հայտին կցվող փաստաթղթերին ներկայացվող պահանջները եւ ներկայացման գերատեսչության կողմից Միության ԱԾՏ հայտի փորձաքննության անցկացման կարգը սահմանվում են ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ։

Միության ԱԾՏ հայտի առնչությամբ ներկայացման գերատեսչության հետ գործերի վարումը կարող է հայտատուի կողմից իրականացվել ինքնուրույն կամ ներկայացուցչի միջոցով, այդ թվում՝ համապատասխան ներկայացման գերատեսչությունում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով։

5. Որպես Միության ԱԾՏ կարող է ճանաչվել այն նիշը, որը թույլ է տալիս ապրանքը նույնականացնել որպես որոշակի աշխարհագրական օբյեկտի տարածքից ծագող, եւ որը, թեեւ չի պարունակում այդ օբյեկտի անվանումը, սակայն հայտնի է դարձել տվյալ նիշն այն ապրանքի նկատմամբ օգտագործելու արդյունքում, որի առանձնահատուկ հատկանիշները բացառապես կամ գլխավորապես որոշվում են տվյալ աշխարհագրական օբյեկտին բնորոշ բնապայմաններով եւ (կամ) մարդկային գործոններով։

Որպես Միության ԱԾՏ չի ճանաչվում այն նիշը, որը, թեեւ աշխարհագրական օբյեկտի անվանում է կամ իր մեջ պարունակում է այդ անվանումը, սակայն համընդհանուր օգտագործման մեջ է մտել որպես ցանկացած անդամ պետության տարածքում որոշակի տեսակի ապրանքի՝ դրա արտադրության վայրի հետ չկապված նիշ։

6. Միության ԱԾՏ հայտի փորձաքննության արդյունքներով ընդունված որոշումների հետ չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից 3 ամսվա ընթացքում ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված կարգով այն բողոքարկելու։

7. Միության ԱԾՏ-ի գրանցման եւ դրա օգտագործման իրավունքի տրամադրման մասին որոշում կամ Միության գրանցված ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի տրամադրման մասին որոշում ընդունած ներկայացման գերատեսչությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին ծանուցում է ընդունված որոշման մասին եւ ազգային արտոնագրային գերատեսչություններ է ուղարկում փաստաթղթեր տրամադրելու մասին հարցումներ՝ նշելով ԱԾՏ-ի գրանցման եւ (կամ) օգտագործման իրավունքի վկայագրի հանձնման համար տուրքի գումարը եւ այդպիսի տուրքի վճարման համար վճարային

վավերապայմանները։

Ազգային արտոնագրային գերատեսչությունները հարցումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացման գերատեսչություն են ուղարկում փաստաթղթեր՝ նշելով Միության ԱԾՏ-ի գրանցման եւ օգտագործման իրավունքի վկայագիրը հանձնելու համար տուրքի գումարը եւ այդպիսի տուրքի վճարման համար վճարային վավերապայմանները։

Նշված տուրքերի չափերը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ։

Միության ԱԾՏ-ի գրանցման եւ (կամ) օգտագործման իրավունքի վկայագրի հանձնման համար տուրքը վճարելու անհրաժեշտության մասին ծանուցումն ուղարկվելու օրվանից 1 ամսվա ընթացքում հայտատուն ներկայացման գերատեսչություն է ներկայացնում Միության ԱԾՏ-ի գրանցման եւ (կամ) օգտագործման իրավունքի վկայագրի հանձնման համար տուրքերի վճարումը կատարված լինելու մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթեր։

Նշված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Միության ԱԾՏ հայտը համարվում է հետ կանչված, վկայագրի տրամադրում չի իրականացվում, ինչի մասին ներկայացման գերատեսչությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է ուղարկում հայտատուին։

Միության ԱԾՏ-ի գրանցման եւ դրա օգտագործման իրավունքի տրամադրման մասին որոշման (Միության գրանցված ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի տրամադրման մասին որոշման) հիման վրա՝ ներկայացման գերատեսչությունը Միության ԱԾՏ-ի գրանցման եւ (կամ) օգտագործման իրավունքի վկայագրի հանձնման համար տուրքերի վճարումը հավաստող փաստաթղթերը հայտատուի կողմից ներկայացնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Միության ԱԾՏ-ն գրանցում է Միության ԱԾՏ-ների միասնական ռեեստրում եւ (կամ) հանձնում է Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի վկայագիրը։

Միության ԱՕՏ-ների միասնական ռեեստրի տեղեկությունների կազմը, ինչպես նաեւ Միության ԱՕՏ-ի օգտագործման իրավունքի վկայագրի ձեւը ու դրանում նշվող տեղեկությունների կազմը սահմանվում են Հրահանգով։

Միության ԱՕՏ-ների միասնական ռեեստրում տեղեկությունների ուղղումները եւ փոփոխությունները կատարվում են Հրահանգով սահմանված կարգով եւ ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ սահմանված տուրքը վճարելու պայմանով։

Միության ԱՕՏ-ների միասնական ռեեստրի ազգային բաժինների տեղեկությունների հավաստիության եւ ամբողջականության համար պատասխանատվություն են կրում այն ազգային արտոնագրային գերատեսչությունները, որոնք զետեղել են համապատասխան տեղեկատվությունը։

Հոդված 21

Միության ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետը

1. Սույն Պայմանագրին համապատասխան գրանցված՝ Միության ԱՕՏ-ի օգտագործման իրավունքի վկայագիրը գործում է Միության ԱՕՏ հայտը ներկայացնելու օրվանից 10 տարվա ընթացքում։

2. Սույն Պայմանագրի 23-րդ հոդվածի 3-րդ կետում եւ սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ Միության ԱՕՏ-ի օգտագործման իրավունքի վկայագրերի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել 10 տարով՝ դրանց սեփականատերերի՝ համապատասխան վկայագրի գործողության վերջին տարվա ընթացքում ներկայացման գերատեսչություն ներկայացված դիմումների հիման վրա՝ ապրանքի ծագման պետությունում տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան Միության ԱՕՏ-ի օգտագործման իրավունք տվող պայմանների պահպանմամբ։

Վկայագրերի գործողության ժամկետը կարող է անսահմանափակ անգամ

երկարաձգել։

3. Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետի երկարաձգումն իրականացվում է սույն Պայմանագրի պահանջներին եւ Հրահանգին համապատասխան՝ հետեւյալի առկայության դեպքում՝

1) իրավատիրոջ մոտ (այն անդամ պետության իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որի տարածքում գտնվում է այն աշխարհագրական օբյեկտը, որի անվանումը (այդ անվանման ածանցյալը) հայտարկվում է գրանցման՝ որպես Միության ԱԾՏ)՝ այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված անդամ պետության լիազորված մարմնի եզրակացությունն առ այն, որ իրավատերը համապատասխան աշխարհագրական օբյեկտի սահմաններում արտադրում է վկայագրում նշված առանձնահատուկ հատկանիշներ ունեցող ապրանքը։ Իրավատերը պետք է նման եզրակացությունն ստացած լինի Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի վկայագրի գործողության վերջին տարվա ընթացքում,

2) իրավատիրոջ մոտ (Միության անդամ չհանդիսացող պետության իրավաբանական կամ ֆիզիկական անձ)՝ այն փաստաթուղթը, որը հավաստում է ապրանքի ծագման պետությունում Միության ԱԾՏ-ի օգտագործման նրա իրավունքը Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետի երկարաձգման դիմումի ներկայացման ամսաթվի դրությամբ,

3) Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետը երկարաձգելու համար տուրքի՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված չափով վճարումը հավաստող փաստաթղթերը։

4. Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետը երկարաձգելու համար, իրավատիրոջ միջնորդությամբ, նրան այդ վկայագրի գործողության ժամկետը լրանալուց հետո տրամադրվում է 6-ամսյա ժամկետ՝ ներկայացման գերատեսչության պետության օրենսդրությամբ

սահմանված չափով լրացուցիչ տուրք վճարելու պայմանով։

Հոդված 22

Միության ապրանքի ծագման տեղանվան իրավական պահպանությունը

1. Միության ԱԾՏ-ի իրավական պահպանությունը տրամադրվում է բոլոր անդամ պետությունների տարածքներում միաժամանակ՝ ներկայացման գերատեսչության կողմից սույն Պայմանագրին համապատասխան Միության ԱԾՏ-ների միասնական ռեեստրում դրա գրանցման հիման վրա։

2. Չի թույլատրվում Միության ԱԾՏ-ի օգտագործելու իրավունքի վկայագիր չունեցող անձանց կողմից գրանցված ԱԾՏ-ի օգտագործումը՝ նույնիսկ եթե այդ դեպքում նշվում է ապրանքի ծագման իսկական վայրը, կամ անվանումն օգտագործվում է թարգմանաբար, գրադարձված եւ տառադարձված կամ այնպիսի բառերի զուգակցմամբ, ինչպիսիք են «տեսակ», «տիպ», «ոճի մեջ», «եղանակ», «նմանակում», «մեթոդ» եւ նմանատիպ բառերը, ինչպես նաեւ նման նիշի օգտագործումը ցանկացած ապրանքի համար, որը ապրանքի ծագման վայրի եւ առանձնահատուկ հատկանիշների վերաբերյալ կարող է սպառողին մոլորության մեջ գցել։

3. Միության ԱԾՏ-ի իրավական պահպանության դադարեցման կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան Միության ԱԾՏ-ին իրավական պահպանության տրամադրումն անվավեր ճանաչելու դեպքում ներկայացման գերատեսչությունը պարտավոր է Միության ԱԾՏ-ների միասնական ռեեստրում համապատասխան գրառում կատարել։

Հոդված 23

Գրանցված ապրանքի ծագման տեղանվան գրանցման կարգը՝ մինչեւ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելը

1. Անդամ պետությունները կիրականացնեն նախքան սույն Պայմանագիրն

ուժի մեջ մտնելը գրանցված ԱԾՏ-ների՝ համապատասխան ազգային ռեեստրների տեղեկությունները պարունակող ցանկերի փոխանակում։

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկերի փոխանակման ընթացակարգի ավարտից հետո, ազգային իրավատիրոջ (իրավատերերի) միջնորդության հիման վրա եւ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված չափով տուրքերի վճարման, դրանց մասին տեղեկությունները Միության ԱԾՏ-ի միասնական ռեեստրում ներառելու պայմանով, ներկայացման գերատեսչության կողմից տրվում է Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի վկայագիր։

Նախքան սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելը գրանցված ԱԾՏ-ի վերաբերյալ տեղեկությունները Միության ԱԾՏ-ի միասնական ռեեստրում ընդգրկելու կարգը, ինչպես նաեւ Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի վկայագրի տրման կարգը սահմանվում են Հրահանգով։

3. Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի մասին վկայագիր տրվում է տվյալ ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի գործողության ժամկետով այն անդամ պետությունում, որտեղ այն գրանցված է եղել նախքան սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելը։ Եթե մինչեւ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվը ԱԾՏ-ն գրանցված է մի քանի անդամ պետություններում, ապա Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի մասին վկայագիրը տրվում է ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի գործողության ժամկետով այն անդամ պետությունում, որտեղ այդ ժամկետն ավելի ուշ է լրանում, եւ այդպիսի վկայագրի գործողության ժամկետը հաշվարկվում է այդպիսի իրավունքի գործողության ժամկետի մեկնարկի ամսաթվից սկսած։

Գլուխ IV

Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

Հոդված 24

Տեղեկատվական փոխգործակցությունը

1. Միության ապրանքային նշանի եւ Միության ԱԾՏ-ի հայտերին վերաբերող փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակումն իրականացվում է ազգային արտոնագրային գերատեսչությունների միջեւ՝ Հրահանգով սահմանված կարգով:

2. Միության ապրանքային նշանի հայտերով եւ Միության ԱԾՏ հայտերով գործավարության միասնական էլեկտրոնային համակարգ ստեղծելու նպատակով Միության անդամ պետություններն ապահովում են յուրաքանչյուր նման հայտի համար միասնական էլեկտրոնային գործ բացելու եւ ազգային արտոնագրային գերատեսչությունների միջեւ տեղեկատվական փոխգործակցության համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ միջոցառումների կատարումը՝ Հրահանգին համապատասխան:

Հոդված 25

Տուրքերը

1. Անդամ պետություններն իրենց օրենսդրությամբ սահմանում են սույն Պայմանագրին համապատասխան Միության ապրանքային նշանների եւ ԱԾՏ-ների գրանցման, իրավական պաշտպանության եւ օգտագործման ժամանակ իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների տեսակները, ինչպես նաեւ այդպիսի իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների կատարման ժամանակ վճարվող տուրքերի չափերը, ելնելով Միության ապրանքային նշանների եւ ԱԾՏ-ների գրանցման, իրավական պաշտպանության եւ օգտագործման ժամանակ իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների տեսակների ցանկից, ինչպես նաեւ այդպիսի իրավաբանական նշանակություն ունեցող տուրքերի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող դրույքաչափերից:

2. Միության ապրանքային նշանների եւ ԱԾՏ-ների գրանցման, իրավական

պաշտպանության եւ օգտագործման ժամանակ իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների կատարման ժամանակ վճարվող տուրքերի չափերի վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության մեջ փոփոխությունների կատարումն իրականացվում է անդամ պետությունների կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող տուրքերի դրույքաչափերի փոփոխման ժամանակ:

Հոդված 26

Հրահանգը

1. Հրահանգը հաստատվում է Եվրոպական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում:

2. Հրահանգը պարունակում է սույն Պայմանագրի կիրառմանը վերաբերող կանոններ, մասնավորապես, ներառելով՝

1) Միության ապրանքային նշանի հայտի եւ դրան կցվող փաստաթղթերի ձեւակերպմանը վերաբերող պահանջները.

2) Միության ապրանքային նշանի հայտը ներկայացնելու եւ դրա նախնական փորձաքննությունն անցկացնելու կարգը.

3) որպես Միության ապրանքային նշան գրանցելու նպատակով հայտարկվող նիշի փորձաքննությունն անցկացնելու կարգը.

4) Միության ապրանքային նշանի հայտում փոփոխությունները կատարելու կարգը.

5) Միության ապրանքային նշանի հայտը եւ Միության ապրանքային նշանի չեղյալ ճանաչված գրանցումը ապրանքային նշանի գրանցման հայտի փոխակերպելու, ինչպես նաեւ ապրանքային նշանի գրանցման հայտը Միության

ապրանքային նշանի հայտի փոխակերպելու կարգն ու պայմանները.

6) Միության կոլեկտիվ նշանը եւ Միության կոլեկտիվ նշանի հայտը համապատասխանաբար Միության ապրանքային նշանի եւ Միության ապրանքային նշանի հայտի եւ հակառակը փոխակերպելու կարգն ու պայմանները.

7) Միության ապրանքային նշանների միասնական ռեեստրի վարման կարգը.

8) Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը երկարաձգելու կարգը.

9) Միության ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու կարգը.

10) Միության ԱԾՏ-ի միասնական ռեեստրի վարման կարգը.

11) Միության ԱԾՏ-ի օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետը երկարաձգելու կարգը.

12) ազգային արտոնագրային գերատեսչությունների միջեւ եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ տեղեկատվական փոխգործակցության կարգը, որի իրագործումը ապահովվում է Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցների օգտագործմամբ, ինչպես նաեւ սույն Պայմանագրի կարգավորման ոլորտին վերաբերող հարցերով պաշտոնական կայքի գործունեության կարգը.

13) փաստաթղթերի տիպային ձեւերը։

Հոդված 27

Փոփոխություններ կատարելը

Սույն Պայմանագրում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով։

Արձանագրություններն ուժի մեջ են մտնում սույն Պայմանագրի 29-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 28

Վեճերի կարգավորման կարգը

Սույն Պայմանագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան:

Հոդված 29

Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելը

1. Սույն Պայմանագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է եւ Միության իրավունքի մաս է կազմում:

2. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու վերաբերյալ վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից, սակայն ոչ շուտ, քան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից Հրահանգը հաստատելու ամսաթիվը:

Անդամ պետությունները դիվանագիտական ուղիներով տեղեկացնում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովին սույն Պայմանագիրն իրականացնելու համար պատասխանատու պետական մարմինների մասին:

3. Անդամ պետությունները տեղեկացնում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովին իրենց օրենսդրությամբ սույն Պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների տեսակների եւ տուրքերի չափերի սահմանման վերաբերյալ:

4. Միության ապրանքային նշանի եւ Միության ԱԾՏ-ների հայտերի ընդունումը կատարվում է սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված վերջին գրավոր ծանուցումը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ստանալու օրվանից:

Կատարված է _____ քաղաքում 20___ թվականի _____ի «____»-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Պայմանագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Պայմանագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետության կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից	**Բելառուսի Հանրապետության կառավարության կողմից**	**Ղազախստանի Հանրապետության կառավարության կողմից**	**Ղրղզստանի Հանրապետության կառավարության կողմից**	**Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից**